

հարմուկ մըն է որ ժուռ կուգայ զմայլանք-
ներու աշխարհի մը մէջ որուն ծիծաղը՝ լոյսն է :

Եւ այդպէս , իր հնդկաստանամիայ խանդո-
տութիւնը գէնիկա նման էր զարծնէ պաշտելի
կենդանի կրակի մը , աւտարբեր արեւի մը որ
երբեք մարը չի մաներ , եւ որուն ամէն մէկ
կայծը հրճուանք մըն է :

Իր հողիին պարտէզին մէջ , բոլոր գիշերնե-
րուն վերջալոյսին , ամէն վայրկեան կը տեսնուի
ծիծաղն այն ցնծութեանց որ կը հետեւին բոլոր
երկան զժաղգութիւններուն :

Ամէն անոնք որ գէնիկա կը տեսնեն , կը
կարծեն թէ այդ ծիծաղները նոյն իսկ իր չըրի-
ներն են , այդ ծիծաղները որ , մէկ մէկ վարդ
համբոյր դառնալու համար , կը թուին սիրոյ
չըրիները հայցել :

Բերանը

Ծնարդիք ունկնդրուած խօսքերուդ երգը կը
զարմացնէ եւ կը համոզէ ողբերուս բերանը :
Լռութեան աշխարհը զոր ունիմ կեանքին գի-
շերին մէջ՝ ամբողջապէս կը բնակաւորուի հը-
րայրքոտ երգովը բու բերնիդ :

Պատրանքներ կ'ունենամ , չնորիւ խօսք-
րուդ որ ականջին մէջ կը մնան , երբ ձեռքս
կը զատուի հրաժեշտի ձեռքերէդ : Պահ մ'առաջ
լսուած այդ խօսքերն յիշելով , կը կարծեմ թէ
միայնակ չեմ սենեակին մէջ :

Շրթներդ ինծի սփոփանք մը կը թողուն .
կեանքի խորհուրդին երաժշտութիւնը որ չըթ-
ներէդ կը թուչի , երջան կուժեմ խոստում մը կը
թողու իմ յուսահատութեան դիշերին :

Այդ բոլոր գեղեցիկ երգերը սո՛ւա են . բայց
ինչ փոյթ , իմ սիրտս կը թրթռայ այդ քաղց-
րալաշնակ սուտերով , այդ սուտերով որոնք
կեանքս յոյսով մը կը պարուրեն :



“ ՀԱՅՐԻԿ ”, իմ կոնդակը

ԽՐԻՄԵԱՆ “ Հայրիկ ” ռեպուբլիկեան-
եայ յոբելեանին առթիւ , համալսել հանգանա-
կութեամբ գնելով Պ. Տէր Մարութեան յօրհան-
կիսանդրին , Եւրոպայեան խումբ մը Հայեր
զայն Եւրոպայեան Գեղարքան ձեռնարկին . եւ
միեւնոյն ասեմ հանգանակիչ Մամախումբը ուղ-
ղեց հետեւեայ նամակը Ամենայն Հայոց Հայրա-
պետին .

Վեհափառ Հայրիկ ,

Ձեր Վեհափառութեան ծննդեան ուժանու-
նէնգամայ տարեդարձին առթիւ , Եւրոպա-
քնակ բազմաթիւ Հայեր փափագեցան Ձեր ազ-
գային բազմաթիւն եւ անգնահատելի գործու-
նէութեան նկատմամբ իրենց հնարգումն ու ե-
րախտագիտութիւնը յայտնել հանդիսաւոր ցոյ-
ցով մը , եւ որոյցեցին հանրային հանգանակու-
թեամբ մը Պ. Տէր Մարութեան յօրհան Ձեր
Վեհափառութեան զէմը ներկայացնող կիսան-
դրին նուիրել Գեղարքան ձեռնարկին , որպէս
զի այդ յարկին ներքեւ կրթութեայ ներկայ եւ
անգնահատելի սերունդները միայն իրենց աչքին առ-
ջեւ ունենան Հայ ժողովրդին բոլոր ցաւերովը
ճանապարհեմուած եւ այդ ժողովրդին յաւիտե-
անական երախտագիտութեամբ պաշարուած Ձեր
պաշտելի զէմը : Հայ ազգը արդէն ամբողջու-
թեամբ յայտնած է Ձեր Վեհափառութեան իր
խանդաղատանքն ու սքանչացումը , սիրտու-
ներուն ամենէն գեղեցիկը՝ « Հայրիկ » տիտ-
ղոսը ստղով Ձեր Վեհափառութեան . մենք մի-
այն խոնարհաբար բաղձաղինք Ձեր Վեհափա-
ռութեան հանդէպ մեր զգացած որդիական յար-
գանքն ու , գործով յայտնել անգամ մը եւս ,
դառն օրերու մէջ ուր Ձեր Վեհափառութեան
ցոյց սուած կ'որովը բազմապատկեց մեր սէրն
ու հոգեւոր :

Մատչելով ի համարը Ձերդ Վեհափառու-
թեան Սբ. Աջոյն , սրտագին կը մաղթենք
երկար կեանք եւ երջանկագոյն օրեր ,

Որով մնամք որդիական ամենախորին յար-
գանքը :

Ձերդ Վեհափառութեան խոնարհ ծառայը

Ի դիմաց Հանդառնակիչ Մամախումբի

Գանձապահ Ասենաղայիր Ասենապետ

Ձ. ԶՈՐԱՅԵԱՆ Կ. ՓԵՆԻՆԻԱՆԵԱՆ Մ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

“ Հայրիկ ” ռեպուբլիկեան եւ հետեւեայ սր-
ճաւարձ կոնդակով :



ՄԱՐՏԻՉ ծառայ Յիսուսի
Քրիստոսի եւ ամենաամենի կա-
մօն Աստուծոյ Յայտնուողայե-
ն եւ Կաթողիկոս ամենայն Հայոց, Մայ-
րազոյն Պատրիարք Համագգական Առաքե-
լական Մայր Եկեղեցոյ Մերոյ Կաթողիկէ
Էջմիածնի Դեղագնիւ պարտաւոյ Միւրաշայ
Յովակիմեան, Կ. Փեղիւմեան եւ Զ. Զօրա-
եան եւ որք ընդ ձեզ են անգամբ հանգանակիչ
Մասնախմբի կիսանդրոյն մերոյ, հարազատացող
Մայր Աթոռոյ, նուիրեմք ողջոյն հանգերն
Հայրապետական օրհնութեամբ :

Ընկալաք զթուղթ սիրելութեան Ձերոյ՝
ուղղելոյ ի 20 Յունուարի տարւոյն, որով ի
ղէմս հանգանակիչ Մասնախմբին յայտ առնէք
մեզ զցոյցն համակրական զղացմանց հայ հօ-
տին Եւրոպոյ առ Մեզ ի գէպ ու թխուռն եւ
հինգամայ յորելին ճննդեան Մերոյ :

Որքեա՛կք հոգեւորք, գոհունակութեամբ
սրտի ընկալեալ գնուէրն հայ հասարակու-
թեան կողմանց յանուն Հոգեւոր ձեմախարհի
Մայր Աթոռոյ, Մեք կոնդակաւս այսու հայ-
րապետական օրհնեմք զՄասնախմբովդ եւ
զմասնակից հասարակութիւնն, զովելով գնանա-
ղին եւ քրպատակն նոցին եւ մաղթեմք ի Միա-
ծին Փրկիչ առատացուցանել ի Ձեզ զսէրն առ
հայրենի սրբավայր եւ յիշատակարանս, որք,
աւա՛ղ, կան այսօր յանուք վիճակի իրբեւ
զայլի սգաւոր յամենայն ուրեք : Իսկ ես, որ
թեւեակեմս զէպ յարեմուտս կենացս, զի՛նչ
արդեօք ինձ միւսխարութիւն սրտի եւ հոգւոյ
քան զվերացումն սզոյ եւ առատպանաց Մերոյ
Եկեղեցոյ իմոյ, բարեկամութիւն եւ բարգա-
ւաճումն եւ քարթրութիւն տառակալեալ ձօտիս,
որ, աւա՛ղ, այնչափ ծանրացաւ եւ բազմա-
պատկեցաւ, որ առաւել քան զկարս մարդկա-
լին անհնարին զարթաւ : Եթէ զիւրալէն այն
պարտաւորն եւ գերեալ առցող Մեզ օրինակ,
ապաքէն ոչ առաւելու սուգ նորս եւ իրաւոն
քան զամս եօթնասուտն : Եթէ օրինակն հաժ-
երեւութեան Յովբն ինձ ի յուշ գայեց, չէին
նորս հարուածք այն, զոր տեսն ու կատար-
եալն ընդ իս, ընդ հայրենի աշխարհին մօր եւ
ընդ ընդ իւր զաւակներն նորս : Այլ սակայն
ըստ Դաւթի եւ համբերելով համբերի ձեռուն
եւ համբերից մինչեւ հայեացէ յիս ի վշտազ-
նայ եւ ողորմեցի ինձ ըստ մեծի ողորմու-
թեան իւրում, զի հաւատած բոլորով սրտիս զի
ոչ ի սպառ անտես առնէ Տէր զազոյն մեր եւ
զհայրենի աշխարհ : Յոյնս ապագայ պայծառ
եւ փառաւոր աւուրցն միւսխարէ զիս տակաւին
եւ ես կամ մնամ իբրեւ զձերութիւն այն ճաճա-
րին որ՝ անկալելոյ Երկնային լուսոյն մեծա-
անձկանօք, որ ետես եւ ընկալաւ ի զիրկան

իւր եւ գոհ սրտիւ օրհնեաց զԱստուածն ասե-
լով՝ « Արք արձակեալ՝ զծառայս քո, Տէ՛ր, ի
խաղաղութիւն : » Ապա եթէ կանք Ամենակա-
լին են թողուլ զիս զաշխարհս եւ կարելէր
սրտիւ առ կոչողն ընթանալ, եղիցին կամք
Տեառն օրհնեալ :

Աղօթեմ, հարազա՛տք իմ, աղօթեմ ես, ի
Փրկիչն Յիսուս, որ պահեաց զԵկեղեցին իւր
եւ զհօտն փոքրիկ յայտնս դարս եւ ի ժամա-
նակս հաստատունն եւ յարատեւ, պահեցէ վե-
րապին յամայր մօք եւ ժամանակօք ի նոյն
անշարժութեան եւ յարատեւութեան : Կացլիք,
մնամկք եւ զուք փոքրիկ հօտ Հայոց ազատն
Եւրոպոյն անխորձ եւ անսասուն, ի յաղորդու-
թեան եւ ի բարօրութեան մինչեւ ցօրն այցե-
լութեան Տեառն եւ ի ձայն աւետաւոր, որ
ասէ՝ « Արք, պահողիս եւ տարաբար Հայք,
եղք եւ փութեմացարուք ի հայրենի աշխարհ ձեր,
զի ծագեց անշ լոյսն ազատութեան, փարա-
տեցաւ խաւարն, վերացաւ սուգն, արիք եւ
չինեցէ զաւերական եւ ընդհեցէ ի նոստ
եւ անդէք եւ թազմացարուք եւ լցէք զերկիրն,
երկիրն զոր ես Տէր հարց Ձերոց : » Եղիցի եւ
եղիցի : Ամէն :

ՄԻԱՑԻՉ

Կաթողիկոս ամենայն Հայոց

ի 10 Մարտի 1905 ամի

եւ ըստ տնւերին ՌՅՈՒՊ

ի Հայրապետութեան մերում ԺԲ ամի

յերարտասան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի ՎԱԿԱՐՔԱՊԱՏ

ՅԻՒ 193



Պ. ՇԱՊԱՆԵԱՆԻ ՅՈՒՑԱԶԱՆԴԵԱԸ

Պ. Արսէն Շապանեանի գործերուն մասնա-
ւոր ցուցահանդէսը գտաւ իրական ու շատ
պատուաբար յաղորդութիւն մը : Կրթարդմաննք
ստուգն այն յօդուածները որ այդ ցուցահա-
նդէսն նուիրուեցան փարիզեան մեծ լրագիրնե-
րուն մէջ :

« Ժուրնալ »-ը կը հրատարակէր, Պ. Շապա-
նեանի կենդանադրին հետ, հետեւեալ յօդուածը
« Արուեստագէտի մը կողմէ՛ տեսալ էր ինք-
նապատանիութիւն պէտք է, հասարակութեան
առջև մտայնակ երևալու եւ իր Զանքերուն
ու հետախուզութեանց արդիւնքը ուղղամտօրէն
անոր դատաստանին ներկայիւրեւ համար : Պ.
Արսէն Շապանեանի գործերուն ցուցադրու-
թիւնը, որ այս պահուս տեղի կ'ունենայ Ժօրժ
Երթիկի նկարչատան մէջ, նուիրագործումն է
սաղաթին մը որ դիմէ ամենաբարձր աստիճան
նով ճշմարտութիւն արտայայտել՝ պարզ լեզ-